Հաշվետվություն

Ս/թ-ի ապրիլի 22-ին ժամը 15:00-ին Բուրաստան համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որին մասնակցում էր գյուղապետարանի աշխատակազմը, համայնքի ավագանին , ՀՀ Արարատի մարզպետարանի Տարածքային և ՏԻ հարցերով վարչության գլխավոր մասնագետ Հասմիկ Դանիելյանը և լրատվության բաժնի աշխատակից Քրիստինե Խաչատրյանը, մարզի տարբեր կառույցներում աշխատող համայնքի բնակիչներ, ակտիվիստներ, համայնքի ենթակա-յության օբյեկտների աշխատակիցներ, ինչպես նաև բնակիչներ, որոնք զբաղվում են միայն իրենց օժանդակ տնտեսության աշխատանքներով:

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար Աշոտ Թարվերդյանը: Նա ներկայացրեց ընթացիկ տարվա առաջին եռամսյակում կատարված աշխատանքները, ձեռք բերված արդյունքները:Ուրախալի էր, որ որոշ հարկատեսակների գծով /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր/ ապահովվել է կատարման բարձր տոկոս /141-200/: բյուջեի I -ին եռամսյակի եկամուտային մասը կազմել է ընդամենը 7653,8 հազար դրամ, այսինքն պլանը կատարվել է 108,5 %-ով:

Միաժամանակ նշվեց, որ բյուջեի կատարման գործում դեռևս կան որոշ թերացումներ, հատկապես համայնքային սեփականություն համարվող հողերի վարձավճարների գանձման աշխատանքներում. Այն կազմում է ընդամենը նախատեսվածի 13%-ը:

Ծախսային մասով կատարվել են նախատեսված հատկացումները. վճարվել են աշխատավարձ, էներգիայի, գազի, կապի, կոմունալ ծախսերը: Կատարվել են նաև ավտոմեքենայի ապահովագրական, տեխզննման, փողոցների սանիտարական մաքրման, արտաքին լուսավորության ցանցի էներգիայի ծառայության ծախսերը:

Կազմակերպվել և իրականացվել են մշակութային միջոցառումներ.

Փետրվար 13-ին մեծ շուքով նշվել է << Տյառնընդառաջի>> տոնը որին հրավիրվել էին քսանինը նորապսակ զույգեր և որոնց տրվել են նվերներ :

Տյառնընդառաջի միջոցառմանը տրամադրվել է 300000 դրամ գումար :

Միջոցառում է կազմակերպվել նաև մարտի 8-ի կապակցությամբ: Գյուղապետարանի և <<Բուրաստանի մանկապարտեզ >> ՀՈԱԿ -Ի աշխատակազմերի կին աշխատակիցներին
նույնպես տրվել է նվերներ : Այս միջոցառմանը համայնքի բյուջեից հատկացվել է 120000 դրամ:

Հատկացվել է դրամական օգնություն սոցիալապես անապահով ընտանիքներին 350000 դրամ և հարազատի կորցրած անձանց՝ 125000 դրամ:

Ընդամենը ծախսվել է 5336.4 հազար դրամ նախատեսված 6115.5 հազար դրամի փոխարեն:

Այնուհետև համայնքի ղեկավարը ներկաներին ծանոթացրեց իր անելիքների հետ : Նախատեսվում է առաջիկայում սկսել մշակույթի տանը կից այգու կառուցման, Ս.Հակոբ եկեղեցու վերանորոգման ու նրա շրջապատի բարեկարգման, փողոցների սանիտարական մաքրման, գերեզմանոցների տարածքների բարեկարգման ու ցանկապատման աշխատանքները :

Ելույթներով հանդես եկան համայնքի բնակիչներ Սուրիկ Մանասերյանը, Ստյոպա Օհանյանը, Նորիկ Հովհաննիսյանը , Երջանիկ Աբրահամյանը, Գոգո Ասոյանը և ուրիշներ:

Ելույթ ունեցողները բոլորն էլ բարձրացրեցին Երևան – Երասխ ավտոճանապարհի վրա կամրջի կառուցման անհրաժեշտության հարցը : Կրկին անգամ շեշտվեց որ առանց այդ կամրջի համայնքի բնակիչները ոչ կարող են ճանապարհից այն կողմ իրենց ունեցած կամ վարձակալած հողերը մշակել , իսկ ճանապարհից այն կողմ համայնքն ունի 518 հա հողամաս, ոչ էլ կարող են անասուն պահել , մինչդեռ գյուղն ունի 500 խոշոր եղջերավոր անասուն, որոնք նույնպես պահվում են այդ հողատարածքների հաշվին:

Քննարկվեց նաև <<Բուրաստանի օր>> ընտրելու հարցը:

Որոշվեց <<Բուրաստանի օր>> ընտրել յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր ամսվա երրորդ կիրակին:

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /Ա.ԹԱՐՎԵՐԴՅԱՆ/